ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ապրիլի 2025 թվականի № 141-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի № 105-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հրազդանի № 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունները իրականացնողի՝ 2025 թվականի ապրիլի 11-ի № 12 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2025 թվականի մարտի 20-ի *«Սուսաննա Ալեքսանյանին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հրազդանի № 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից ազատելու մասին»* № 105-Ա որոշման 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Մինչև մրցույթի արդյունքում ընտրված տնօրենի նշանակվելը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հրազդանի № 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության դասվար ***Նազանի Ռուբիկի Հարությունյանի*** վրա և վարձատրել հաստիքացուցակով տնօրենի համար հաստատված դրույքաչափին համապատասխան:»:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Հրազդանի № 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանձնման-ընդունման աշխատանքները և կազմել համապատասխան արձանագրություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՄԱՀԱԿՅԱՆ**

2025 թվականի ապրիլի 21
ք. Հրազդան